թարութիւն և զսփոփանս, առ որ ունիմք ասել, թէպէտ ըստ աշխարհի վարեցման փոխումն նորին պակասութիւն մեծ և տրտմութիւն գերազանց իմն է ձեզ՝ զաւակդ և ընտանեացդ և մեզ բարեկամացս նորին, սակայն ըստ քրիստոնէականի յուսոյ և կրօնից մերոյ ոչ այլ ինչ, թէ ոչ ի պանդխտական վայրիս յայսմանէ առ բնիկ հայրենիսն մեր փոխել։ Ուստի պարտիմք զծանրութիւն, որ ըստ աշխարհի, քրիստոնէաբար թեթևութեամբ տանել ըստ յուսոյ հանդերձեալ կեանքն։ Լսելով բարձրաբարբառ ձայնի սրբազան առաքելոյն, թէ ոչ է պարտ քրիստոնէից սուգ առնուլ ի վերայ մեռելոց, այլ լացցին հրէայքն և կոծեսցին թերահաւատքն, զի նոքա են արժանի կոծոց և ողբոց, որովհետև վասն միոյն յաւիտեան տանջանքն է պատրաստեալ, և միւսն շունի երբէք զյոյս յարութեան վերստին նորոգման։ Իսկ մեք՝ քրիստոնեայքս, յուսով ակընկալեալ կենաց անվախճանից, համբերաբար ըստ Հօրայ օրհնեալ։ Արդ և դուք, սիրելիդ մեր, այժմ զզօրութիւն հոգւոյդ արիացուցանելով հարկ է քիչ հարապատ որդիաբար զնմանութիւն հօր քո բերել ի քեզ։ Բարեձևութեամբ քաղաքավարութիւնդ և կարգաւոր կառավարութիւն տան ձերոյ և համայն գործոց ձերոց, զի լսելով մեր զբարի համբաւ ձեր, ուրախ լիցուք ի ձեզ բարեկամական սրտիւ, վասն զի յայնժամ ոչ լինի ի հաշիւս մեռելոց արկեալ պայծառ հայրն ձեր և սիրելին մեր, որովհետև զհամատիպն զորդի որ ունելոց է ի յաշխարհի։ Սակս որոյ, լսելով ձեր զմիտս զայս բարեկամական գրուած և ընտրութիւն իբր զբարին ի յաման զգօն մտաց ձերոց վեր ընդունելով սրտիւ նաւորեսջիք ի պայծառութիւն անուան ձերոյ և ի ցնծութիւն սրտի բարեկամաց ձերոց։

Զխնդիրն լուսահոգի հօր ձերոյ, որ յաղագս Լօռոյ գաւառին, յօժարութեամբ կատարեալ երանելի հօր մերոյ արքային և հանդերձ տեղւոյս նոյն ժամենական եղելութիւն զգրուածնի ձեռն հինգ հարիւրապետն Ռաֆայէլ պատանեկին զկնի փոխիլոյն հօր մերոյ առաքեալ եմք առ ձեզ և յուսամք ցարդ բաժանեալ իցէ ձեզ և զայն ամենայն ծանուցեալ իցէք[5]։

Իսկ այժմենական եղելութիւնքն շնորհօքն աստուծոյ ներկայապէս կամք անդորր և խաղաղութեամբ մեք և երկիր մեր, անկասկած ի թշնամեաց և ի շրջակայ գրացեաց մերոց եղեալ պարսիկք իշխանաց թէ ի Գեանջայու և Երևանու և թէ յայլոց, յորոց բաց ի բարեկամութենէ և յընծայաբերութենէ ոչ ինչ ցուցանի մեզ։ Նոյնպէս և ի մեծութենէ նորին ինքնակալութենէ Պաւլ Պետրովիչ կայսերէն ամենայն ռուսաց ունիմք աւելի քան զմօրն իւրոյ զշնորհ և զողորմութիւն, զոր տալով մեզ զզօրս վեց պատալիոնս մշտակայս իւրովք ռուճկօք և ամենայն հարկաւոր պարագայիւքն զօրաց, և յատկապէս մեզ թագ, գաւազ[ա]ն և կրկնոց արքայական և զերկիրս մեր թուելով տերութիւն իւրոյ կայսերական մեծութեան, որպէս զՄոսկօֆն և զՊետրսբուրգն, որոց այսց ամենից շնորհաց և պարգևեաց ընկալնումն։ Յուսամ չև ևս տեսեսցէ քսան օր ժամանակ, ըստ բարձր հրամանի նորին մեծութեան և ըստ գրեցման մինիստրին[6] մերոյ։ Ուրեմն եթէ ըստ շաւղին հօր ձերոյ հայրենասէր կամս ունիցիք, արժանի է ասել՝ աչք ձեր ի լոյս եղիցին և սիրտք ձեր՝ ի ցնծութիւն։

Ի սահմանի մերում եղեալ զբոլոր ազգն և զժողովուրդն հայոց առանց խտրութեան ազգէ մերմէ (այսինքն ի վրաց) ունիմք ընկալեալ ի ծառայ գթութեան և պահպանութեան մերոյ ըստ իւրաքանչիւր արժանեացն իւրեանց և դայնս, որք տարագրեալքն են ի հօտէս մերմէ և ցրուեալք ի զանազան գաւառս՝ նժդեհ կենօք կեան ընդ տերութեան այլազգաց մեծաջան աշխատութիւն, զայնս ևս ածել կամիմ առ մեզ[7], զի ընդ եղբարս իւրեանց՝ բնակեսցին ի սեպուհ աշխարհս իւրեանց ի վայելել զսէր և զգթութիւն մեր, և յատկապէս զձեզ իսկական հաւատարիմ բարեկամսդ մեր ցանկամք ունել ի պատիւ, ի սէր և յաստիճան նախագահութեան ի մէջ նախարարաց մերոց, որք ընդ մեզ են։

Զձերդ բարեկեցութեան և գտեղւոյդ համբաւն անպակաս գրեսջիք մեզ, զի ախորժելիք են մեզ և եթէ զխնդիր իմն ևս ունիցիք՝ չեն անտես առնելիք ի մէնջ, այլ իբրև հարազատի և հաւատարիմ բարեկամի յօժարութեամբ կատարելոց եմք։ Եվ զայլ մանրամասնաբար որպիսութիւնք տեղւոյս և մեր ի մերմէ